Ուղղությունը. Տնտեսագիտություն, բակալավրիատ, առկա ուսուցում

Առարկա Б1.В16. Տնտեսական վիճակագրություն

Անոտացիա

Աշխատատարությունը՝ *2 կրեդիտ, 72 ակադեմիական ժամ*

Ստուգարք

Համառոտ նկարագրություն. Տվյալ դասընթացի ուսումնասիրությունը նպատակաուղղված է ունկնդիրների մոտ ձևավորել հիմնային գիտելիքներ ու գործնական հմտություններ սոցիալ-տնտեսական վիճակագրության ոլորտի էության, հիմնական գործիքների մասին: Դասընթացը ուսանողներին խանոթացնում է հիմնական հասկացությունների, մեթոդների ու գործիքների հետ, որոնք անհրաժեշտ են տնտեսագիտական վերլուծություն իրականացնելիս:

Առարկայի նպատակն ու խնդիրները.

Դասընթացի նպատակն է ուսանողների համար ձևավորել տեսական և գործնական ունակություններ, որոնք անհրաժեշտ են սոցիալ-տնտեսական գործընթացների պատճառահետևանքային կապերը վերլուծելու համար:

Կապը ուսումնական պլանի այլ առարկաների հետ. Դասընթացը սերտորեն կապված է հետևյալ առարկաների հետ՝ «Տնտեսագիտության տեսություն», «Վիճակագրություն», «Հավանականության տեսություն»: